

ԱՇՏԱՐԱԿԻ ՀՐՁԳՈՐԾՎԱՆ

63(47.925)

ՀԱՅԱՍՏԱՆԻ 1961 Տ.

ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈԿԱՆՈՒՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇՏԱՐԱԿԻ ՀՐՁԱՆԱՑԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ
ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱՂԱՔԻ 1935 թ. ԴԵԿԵMBERԻ 17-ԻՆ

—

1998

ՏԵՂԵԿԱՆ

631.15 (Կ7.925)

ԱՏԼԻՑՎԱԾ + 1981

Դ

1936 թ. ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԳՐՈԿԱՆՈՆԵՐԸ

Հողի նախապատրաստումը գարնանացանի համար
ռկան աշնանը, կատարելով ցրտահերկ ըստ յենթա-
լիքանների հետևյալ ժամկետներում՝

1. Առականի յենթացան. — Ընդդրկելով Աշտարակ,
Վոսկեվազ, Փաթրինջ, Աղարակ, Հախս, Փարրի,
Թաքիս, Կոմունա, Նաղբան, Մողենի գյուղերը՝
15/9-ի մինչև 15/11-ի.
2. Ղարաջարի յենթացան. — Ընդդրկելով Մաղղա,
Ավան, Ղոյթուր, Դղբ, Խնաքլու, Ուգով, Անդրսակ
գյուղերը՝ 1/9-ի սկզբն 1/11-ի.
3. Կարբիի յենթացան. — Ընդդրկելով Ուշի, Ոհանավան՝
1/9-ի 15/11-ի.
4. Ցեղվարդի յենթացան. — Ընդդրկելով Դովրի, Փոքրա-
վան, Ճաթղուան, Աշիրաբաթ, գյուղերը՝ 1/9-ի մին-
չև 15/11-ի.
5. Ղարաջումի յենթացան. — Ընդդրկելով Արքեկ,
Թղիթ, Թուլինաբի, Քարաշամբ գյուղերը՝ 10/9-ի
մինչև 1/11-ի.
6. Կոչի յենթացան. — Ընդդրկելով Ռէջան, Թալին,
Շամիրյան գյուղերը՝ 1/9-ի մինչև 10/11-ի.
7. Արտօնվածի յենթացան. — Ընդդրկելով Թյուր-
դալու, Համալու, Սաղմառավան գյուղերը՝ 1/9-ի
մինչև 1/11-ի.

A 3921

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱՄԱՆԱՀ
ԱԿԱԴԵՄԻԱՆ

8. Թյուրականի յենթագուն. — Հնդզրկելով Փերսի
գույղը՝ 1/9-ի մինչև 1/11-ի:

Վարի խորությունը ընդունել 18—20 սանտիմետր
հացահատիկային կուտարաների համար, իսկ
բանջարանոցի և ծխախոտի համար ցանքսը ամբողջա-
պես ապահովել ցրտահերկով՝ 20—22 սանտիմետր խո-
րությամբ։ Վորպես կանոն հենց հնձից անմիջապես
հետո ծղնոտավար կատարել 6—8 սանտիմետր խորու-
թյամբ բաղմախոփանի գութաներով։

Եերքատվության բարձրացման և մոլախոտերի գես-
պայքարելու եֆեկտավոր միջոցառումներից մեկն ե՝
հնձից 7—10 որ հետո ծղնոտի այրումը։ Առաջին
վերթին այրել կոմբայնով հնձված տարածությունը,
նախորոք ապահովել հականրդենային միջոցները։

Այս վայրերում ուր հնարավոր չի լինի գարնա-
ցանը ամբողջապես ապահովել ցրտահերկով, կա-
տարել դարնանավար և ցանքս. հացահատիկային կու-
տուրաների ընտեղենների, խոտարույսերի ըստ յեն-
թաղջանների հետեյալ ժամկետներին։

1. Յենթագուն. — Հացահատիկ և խոտարույսերի համար
20/3-ի մինչև 20/4-ի.

Հնդեղեններ 10/4-ի մինչև 25/4-ի։

2. Յենթագուն. — Հացահատիկ և խոտարույսեր 10/4-ի
մինչև 10/5-ի.

Հնդեղեններ՝ 20/4-ի մինչև 1/5-ի։

3. Յենթագուն. — Հացահատիկ և խոտարույսեր 1/4-ի
մինչև 5/5-ի.

Հնդեղեններ՝ 10/4-ի մինչև 5/5-ի։

4. Յենքարգան.— Հացահատիկ և խոտաբույսեր 20/3-ի
մինչև 20.4.-ի.
Հնդկաններ 25/3-ի մինչև 20/4.-ի.
5. Յենքարգան.— Հացահատիկ և խոտաբույսեր 5/4-ի
մինչև 5/5.-ի.
Հնդկաններ 10/4.-ի մինչև 10/5.-ի.
6. Յենքարգանին.— Հացահատիկ և խոտաբույսեր 10/4-ի
մինչև 10/5.-ի.
Հնդկաններ 15/4.-ի մինչև 10/5.-ի.
7. Յենքարգանին.— Հացահատիկ և խոտաբույսեր
15/4.-ի մինչև 10.5.-ի.
Հնդկաններ 20/4.-ի մինչև 10/5.-ի.
8. Յենքարգանին.— Հացահատիկ և խոտաբույսեր
10/4 իմինչև 10/5.-ի.
Հնդկաններ 15/4.-ի մինչև 10/5.-ի.

ՍԵՐՄԵՐԻ ԱՐՄԱՆ ՄԵԿ ՀԵԿՏԱՐԻ
ՄԵԼ ԲԵԿԱՐ ԱԵՐՄԱԳՈՒՄ ՅՈՒՄԱՆ ԸՆԴԱՄՆ ԸԹ ՅԵՒՐԱՉԱՍՑԱՆՆԻ

Խ	Խ	Մշակացած քարնամացած		Քաղի		Հաճայ		Հագեղնաներ		Ծովագութեան	
		պահաժամ	պահաժամ	պահաժամ	պահաժամ	պահաժամ	պահաժամ	պահաժամ	պահաժամ		
1	Բլատան . . .	1,8	2	1,6	1,8	2	1,7	0,7	0,8	0,6	0,4
2	Հարսչալար	1,6	1,8	1,5	1,7	1,8	1,7	0,8	0,8	0,6	0,5
3	Կարբէ . . .	1,8	2	1,6	1,8	1,8	1,6	0,8	0,8	0,6	0,5
4	Ջեղիւզէր	1,6	1,8	1,5	1,6	1,4	1,5	—	0,7	0,5	0,4
5	Կու . . .	1,8	2	1,6	1,8	1,8	1,6	0,8	0,8	0,6	0,5
6	Հարաջրան	1,6	1,8	1,5	1,6	1,4	1,5	1,4	—	0,7	0,5
7	Արտաշըռ	1,8	2	1,6	1,8	1,8	2	1,5	0,7	0,8	0,6
8	Բյուրուչան	1,8	2	1,6	1,8	1,8	2	1,5	0,7	0,8	0,5

ԽՈՏԱԲՈՒԽԾՈԵՐ

Ա Հ	ՅԵԿԵՄԱՉՈՎԱՆՆԵՐԻ անունը	ԼԵՐՆԵՐՆ ԱՆ	ՎԼՐ ԱՆ	ԱՐԴ ԱՆ	ՔՐԵԱԿ ԱՆ
1	Ռշական	1,2	1,0	0,3	0,8
2	Հարաջոլար	1,0	1,0	0,4	1,0
3	Կարբի	1,0	1,0	0,4	1,0
4	Ցեղվարդ	1,0	1,0	0,3	1,0
5	Հարաջորան	1,0	1,0	0,3	1,0
6	Կոշ	1,0	1,0	0,3	0,8
7	Արտաշավան	1,0	1,0	0,4	0,8
8	Բյուրական	1,0	1,0	0,4	0,8

ԿՐԿՆԱՎԱՐ

Բուլղր կուլտուրաների համար կատարված ցրտա-
ներկը գորնանը մինչ ցանքս սկսելը՝ 10—15 որ առաջ,
հողը քեզի գալուց կրկնավար անել և անմիջապես փոց-
խել. փոցխման հետևանքով գուրս յեկած մոլախոտերի
արմատները, բուսական մնացորդները, գուրս հանել
գաշտից և այրել. Կրկնավարի խորությունը ընդունել
10—12 սանտիմետր:

ՏԵԼԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Վաղ ցելը կատարել 18—20 սանտիմետր խորու-
թյամբ. Հերթին զուգընթաց վաղ ցելը դիզզագելու Մոլա-
խոտերի վաջնացման և խոնավության պահպանման
համար վազցելը ամռան ընթացքում՝ մոլախոտերը յերե-

վալուն պես մշակման յենթարկել՝ 1—2 անգամ բազմա-
խոփ գութան երով կամ զիղղակն երով։

Վաղ ցեղերն աշնանս ցանը սկսելուց 10 օր առաջ
կրկնավարել 10—12 սահնտիմետր խորությամբ. ըստ
յենթաշրջանների վաղ ցեղ կատարել հետեւյալ ժամկետ-
ներին։

1-ին	յենթաշրջան	20/3-ի	մինչև	1/5-ի.
2-րդ	»	1/5-ի	»	25/7-ի.
3-րդ	»	1/4 ի	»	15/5-ի.
4-րդ	»	20/3 ի	»	1/5-ի.
5-րդ	»	15/5 ի	»	15/5-ի.
6-րդ	»	1/4-ի	»	10/5-ի.
7-րդ	»	15/4-ի	»	25/5-ի.
8-րդ	»	25/4-ի	»	10/6-ի.

ԱՇԽԱՑՅԱՆ

Աշխանացանի ժամկետները ընդունել ըստ յենթա-
շրջանների՝

1-ին	յենթաշրջան	15/9-ի	մինչև	15/10-ի
2-րդ	»	29/9-ի	»	15/10-ի
3-րդ	»	5/9 ի	»	10/10-ի
4-րդ	»	15/9-ի	»	15/10-ի
5-րդ	»	1/9-ի	»	5/10-ի
6-րդ	»	5/9-ի	»	5/10-ի
7-րդ	»	5/9-ի	»	10/10-ի
8-րդ	»	10/9 ի	»	10/10-ի

Գարնանը բացվելուն պես զիղղակել բազմամյա-
խոփարույսերի ամբողջ տարածությունը. ինկատի ռա-
նկանալով գարնանացան հայահատիկի ցածր բերքա-

տվությունը, աստիճանաբար 1936 թվից սկսած Յեղարդի յենթառայոնում 20 տոկոսով կրճատել զարնաշացանի հացահատիկը, այդպիսին ավելացնելով աշնացանի վրա,

ՀԱՑԱՑՏԻԿԻ ՔԱՂՆԱՆ

Հացահատիկը քաղհանկը 100 տոկոսով, նախքան ցողունակալելը, ըստ վարում առաջին հերթին աշնացանը նախորոք կաղմելով քաղհանվելիք տարածության հերթականությունը սահմանող որացուցալին պլան:

ՀԱՑԱՑՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԶԲԵԼԸ

Հացահատիկային կուլտուրաները ջրել՝

- I. Աշնանացանը ցանելուց հետո.
- II. Թփակալման շրջանում.
- III. Կաթնային շրջանում:

ԲԵՐՔԱՑԱՎԱՐ

Եերքահավաքին զուղընթաց կտտարել քյուլաղի տեղափոխումը, նախորոք խուրձ կապելով։ Մալի վրա տեղափորել հասկերի ծալքերը գեպի ներս և դիղել կալում 30—40 մետր հեռավորության վրա։ Միչեւ հունձը սկսելը՝ առնվազը 10 որ առաջ ավարտել կալի նախապատրաստումը, ազանվելով կալը հականրգեհալին ժիջոցառութերով (փոսերի փորելը — ջրով լցնելը, առուներ անցկացնելը, լիքը ջրով տակառներ ունենալը, դուլեր ունենալը և ալլն),

Նախագամրաստել բերքի տեղափոխման հետ
կապ ունեցող ինվենտարը և պահպաները

Սխտահանել վերանորոգված սերմաղտի չները, պա-
հանահերը, կղեռքները, տարաները, վիխագրական մի-
ջոցները՝ (սայլերը Փուրդոնները). Պահեատը պետք է
ապահոված լինի շաղակատով, բրիգենտներով, բահերով,
ավելներով, սայլակներով և այլն.

Կալսումը սկսել հնձին զուզընթաց, այն եւ հնձի
սկսման որից 2 օր հետո:

ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

Պարարտանցութ տեղափոխել դաշտ՝

1. Ծրտահերեի տակ հացահատիկային կուլտուրա-
ների համար ըստ յենթաշրջաների՝

ա) Յեղփարդի յենթառայնը՝ պարարտացնել բա-
ցառապես գոմախրով, վորպես անջւափի հողամասեր-
ացդպի սին տեղափոխել դաշտ աշնանը, հոկտեմբեր
ամիսներին և ցրել. Մեկ հեկտարին տալով 36—50
տոնն. գոմախիրը ցրելուց անմիջապես հերկել. Նույն
յենթառայնում վաղ ցեղի տակ հացահատիկային կուլ-
տուրաների համար տեղափոխել, ցրել և անմիջապես
հերկել մարտի 15-ից մինչև մայիսի 1:

բ) Կարբեի, Կոշի, Ռշականի յենթոշրջաններում
անջրտի հողամասերում պարարտացում կատարել
ցրտահերեկի տակ, մինչ հերկը սկսելը՝ սեպտեմբեր, հոկ-
տեմբեր ամիսներում. ցրելուց հետո անմիջապես հեր-
կել. մեկ հեկտարին տալով 36—40 տոնն. իսկ վաղ-
ցելը գարնանը մարտի 15-ից մինչև մայիսի 1-ը:

Զրովի հողամասերը հացահատիկի համար պարար-

ատցնել հագաքական պարաբռանկութերով (կոմպոստ), նույն ժամկետներին մեկ հեկտարին տալով 15—20 տոննու:

Նույն յենթառայոնում ծխախոտի և բանջարանցի համար հատկացված հողամասերը պարաբռացնել գոմախրով, ապահովիլով աճբողջ շանքսի տարածությունը ցրտահերկով, մեկ հեկտար ծխախոտի տարածությանը տալ 18—20 տոնն գոմախր, իսկ բանջարանոցային կուլտուրաների համար մեկ հեկտարին 50—70 տոննու:

2. Մեքենացման աշխատանքները ապահովելու և քերքատվությունը բարձրացնելու նպատակով՝

ա) հեռացնել քարակուտերը և այլիս քարակույտեր չստեղծել, կատարել քարահագաք և անմիջապես դուրս բերել դաշտից:

բ) միջնակների վերացում կատարել հերկերին զռւգընթաց, դեկավարվելով ստացված առաջադրանքներով:

3. Շրջանը կոնդենցիոն և լավորակ սեմացուներով ապահովելու համար կատարել սերմացուների մաքրության, անոտեական պիտանիության և ծլունակության ստուգում, ըստ վորում գարնանացանի սերմացուցի ստուգումը կատարել 2 անգամ. մեկը ավարտել մինչև դեկտեմբերի 10, իսկ 2-րդը՝ գարնանացանից 20 որ առաջ. աշնանացանի սերմացույի ստուգումն ավարտել աշնանացանը սկսելուց առնվազը 10 որ առաջ:

4. Մի շարք տարիների հետազոտումից պարզվել է, վոր սերմացույի պահմիտիվ ախտահանումը արդյունք չի տալիս, ուստի խստիվ արգելվում և հիշակեցնելով ախտահանումը:

Զոր ախտահանումը կատարել ախտահանիչ մեքենայով. մեկ ցենաներ ցորենին վերցնել 75 գրամ գավիտովի փոշի կամ 150 գրամ Ա. Բ. փոշի լսու վորում Ա. Բ-ով ախտահանումը սկսել վետրվարի 1-ից, գավիտովի փոշիով մարտի 1-ից:

Կարու և հաճարի սերմացուն ախտահանել կիսաշոր լիղանակով, մեկ մաս ֆորմալինին վերցնել 80 մուշ ջուր և մեքենայով սրսկել սերմացուն ցանքսից մեկ որպաաջ: Ախտահանված սերմացուն պահել չոր և մաքուք պահեսաներում:

5. Մեքենա-գործիքների հաշվեառումն ու վերանորոգումն գարնանացանի համար սկսել գեկտեմբերի 1-ից, այն հաշվով, վոր գարնանացանը սկսելը լրիկ պատրաստ լինի թե գարնանացանի և թե բերքահավաքի գյուղգործիքներով. իսկ աշնանացանի գյուղգործիքների վերանորոգումը սկսել մայմսի 15-ից և տվարտել հունիսի 15-ին:

ԾԽԱՀՈՑԻ ՇԹԻԼԱՆՈՑՆԵՐԸ

1. Հոդի թերությունը յեկ մօտկումը.

Եթիլանոցի հոդի ընտրությունը պետք ե կատարել աշնանը մինչ նոյեմբերի 10-ը, վորը պետք է պաշտպանված լինի հեղեղներից, քամիներից և լինի արևոտ: Հոդաձասը ողեաք լինի վիսրուն և ջրաթափանցիկ, ստորերեկյա ջրերից հեռու, հոդը պետք ե լինի հարթավայրում, կամ քիչ թեքություն ունեցող տեղում, դեպի հարավ կամ հարավ-արեմտյան ուղղությամբ և ապահովված լինի վոռողվելիք ջրերով:

Սառն և կիսատառք մարդերի համար հատկացված հողամասում 1-ին փորը պետք ե կատարել աշնանը:

ՇԻԹԻԼԱՆՈՑԻ ՏԻՊԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Մեկ հեկտար տարածություն շիթիլելու համար պիտք ե ունենալ 75 քառակուսի մետր շիթիլային տարածություն. սառն մարգերի շիթիլանոցի 2 ըդ փորը պիտք ե ավարտել մինչ փետրվարի 5-ը, իսկ մարզերի պարարտացումը պիտք ե ավարտել 5 որ ցանքսից առաջ. Սառն մարգերում պիտք ե կատարել հողի և գոմաղբի ախտահանում մինչ 10-րդ ամիսը. սառն մարզերի լայնությունը պիտք ե լինի 1 մետր. իսկ յերկարությունը 8—10 մետր. Մարգերի ուղղությունը պիտք ե լինի արևելքից դեպի արևմուտք, իսկ թեքությունը դեպի հարավ։ Շիթիլներն աճեցնելու համար մննդատու շերտը պիտք ե բաղկացած լինի հին փթած գոմախրի, քերրի հողի, և ալապի խարճնուրդներից։

ՇԻԹԻԼԻ ԱՃԵՅՑՈՒՄԸ ՅԵՎ ԽՆԱՄՔԸ

Մարգերում պիտք ե ցանել տեսակավոր սերմացու. մեկ քառակուսի մետր տարածության վրա մեկ գրամ, գորը պիտք ե ախտահանված լինի նախքան ցանելը։

Ցանքը սառը մարգերում պիտք ե կատարել մինչ 15/3-ի. իսկ բաց և կիսատաք մարգերում մարտի 10-ից մինչև ապրիլի 10-ը։

Հավասար ցանքս ստանալու համար պիտք ե սերմը խառնել գոմախրի հետ, այն եւ մեկ մաս սերմին 8 մաս գոմախր։

Ցանքսը պիտք ե կատարվի հմուտ մարդկանց միջոցով. ցանքսից առաջ և հետո արհամաժելու և մարգերը

նւակցնել (տարամբովկայի լենթարկել): Յանքսը չպետք
է կատարել քամու ժամանակ: Շիթիլանոցը պետք է
ջրել ըստ սահմանջի, որեկան 2 անգամ, առավոտքան
և յերեկոյան:

Ցրտից, կտրկտից, և ընդհանրապես վատ յեղա-
նակից պաշտպանելու հաւաք ամբողջ վիթիլանոցը
պետք է ծածկուներով ծածկել:

Շիթիլների աճեցման համար պետք է 3—4 անգամ
քախհանել—դլխավորապես յերեկոյան և ամպամած
որերին. քաքհանից առաջ պետք է սնուայնան ըրել

ՇԻԹԻԼԻ ՀԱՆԵԼԸ

Շիթիլը հաճելուց առաջ նախորոք պետք է ջրել
մարգելը: Շիթիլները պետք է հանել մեկ մեկ (հատ-
հատ) և դաշտ պետք է տեղափոխել արկղներով կամ
քթոցներով՝ արձատները ներս զրված զրությամբ: Շի-
թիլ անելու համար պետք է 1նարել 4—5 տերեւոնե-
ցող սլիտանի և առաջ վիթիլներ:

ՄԻՍԻՈՆԻ ՍՍԾԻԼՈՒՄԸ

Կատարել մայիսի 10-ից մինչև հունիսի 10-ը, մեկ
հեկտարում 75000 հատ. սածիլի հեռավորությունը
շարքում սահմանել մեկը մյուսից 20 սանտիմետր,
իսկ միջջարքայն տարածությունը՝ 60—70 սանտիմետր:

Սածիլումից 3—4 որ հետո կատարել չորացած
տեղերի լրացում նոր սածիլներով. ծխախոտի ջուրը
առան ըստ պահանջի 6—5 անգամ, ըստ վորում առա-
ջին ջուրը սածիլումից մեկ որ հետո: Ծխախոտի քախ-
կանումը կատարել:

ա) սածիլումից 10 որ հետո մայիսի 20-ից մինչև
յև հունիսի 10-ը.

բ) հունիսի 5-ից մինչև հունիսի 25-ը.

գ) հունիսի 20-ից > հունիսի 10-ը.

Մաղկատել և բջտտել վեգետացիայի ընթացքում
շանգամ. բերքահավաքը սկսել ծխախոտի տեխնիկա-
կան հասունացման շրջանում 5 նվազ՝

1) Հուլիսի 15-ից մինչև ողոստոսի 1-ը.

2) Հուլիսի 22-ից > ողոստոսի 10-ը.

3) Ոգոստոսի 25-ից մինչև ողոստոսի 26-ը.

4) Ոգոստոսի 25-ից > սեպտեմբերի 15-ը.

5) Սեպտեմբերի 10-ից > սեպտեմբերի 25-ը.

Ֆիլիճի հավաքը սկսել սեպտեմբերի 30-ից մին-
չև հոկտեմբերի 5-ը. ծխախոտի տեղափոխումը կառարել
քաղին զուղընթաց, խնամքով զասավորելով սայլի մեջ

Տեղափոխումից անմիջապես հետո ջարել և մետ-
րանոց ստանդարտ թելերով և խստիք անուլ (դեղնե-
լուց հետո) անմիջապես քաշել ռամկանիրի վրա:

Չորտցած ծխախոտները հավաքել առավոտյան
հովերին:

Չորտցած ծխախոտը անպայման խոնավանոցում,
կախել, վորից հետո տեսակավորել՝ հմուտ մարդկանց
ձեռքով և հակավորել:

ԴԱՇԱՅԻՆ ՎՆԱՍԻՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Ա. Դաշտային մկների գեմ՝ հետազոտումը սկսել
մարտի 5—15-ը. իսկ պայքարը սկսել մարտի 15-ից
ովարտել մարտի 25-ը:

2. Մորեիի ձվապարկերի հետազոտումը սկսել
մարտի 20-ից մինչև ապրիլի 10-ը. իսկ պայքարը
սկսել մայիսի 25-ից, ավարտել հունիսի 20-ին:

3. Ծխախոտի և բանջարանոցային սածիլանոցնե-
րում ստորերկրյա ֆնասատուների (բոյրոյի) դեմ պայ-
քարը սկսել մարտի 15-ից և ավարտել մարտի 20-ին:

4. Ծխախոտի և բանջարանոցային սածիլան հո-
ղամասերում (դաշտում), բոյրոյի և սովորայի դեմ պայ-
քարը սկսել ապրիլի 25-ից և ավարտել մայիսի 5-ին:

Ծխախոտի սնկային հիվանդության - թարռուխի
դեմ պայքար կազմակերպել հունիսի 25-ից մինչև
հուլիսի 10-ը:

Բանջարանոցային ֆնասատուների տվյալի դեմ
պայքարը կազմակերպել 2-3 անգամ, ըստ վորում
առաջինը՝ մայիսի 25-ից մինչ մայիսի 30-ը. 2-րդը՝
հունիսի 5-ից մինչև հունիսի 10-ը. 3-րդը՝ հունիսի
25-ից մինչև հուլիսի 10-ը:

Կաղանքի ցեցի դեմ պայքար սկսել հուլիսի 5-ից
մինչև հուլիսի 15-ը:

Բանջարանոցային և բոստանային ալյուրացող
հիվանդության դեմ պայքար սկսել հունիսի 10-ից
մինչև հունիսի 25-ը:

Հիշյալ ֆնասատուների և հիվանդությունների դեմ
պայքարելու միջոցառումները կիրառել ուղարկվող
հատուկ հրահանգներով:

ԲԱՆՁԱՐԱՆՈՑԱՅԻՆ ԿՈՒՏՈՒՐԱՎԱԵՐԻ ԶԵՐՄՈՑՆԵՐԻ ՊԱՐՍՐԱՎՑՈՒՄԸ

Սառը ջերմոցները պատրաստել հարավային կոճ հարավ-արևմոյան թեքության վրա. պաշտպանված սառը քամիներից և ստորերկրյա ջրերից հեռու, վոչ կավալին հողերում:

Ջերմոցների մեծությունը՝ լայնությամբ 1,5 մետր, յերկարությամբ 2 մետր, խորությամբ 1 մետր. Ջերմոցների փոսերի փորման աշխատանքները սկսել անպայման աշնանը: Վորպիս կանոն ջերմոցների մեջ 60 սանտիմետր խորությամբ լցնել չքայլված աղը, 20 սանտիմետր հող, իսկ 10 սանտիմետր քայլված աղը հետ խառնած հող, անպայման մաղած, վորպիսի աշխատանքը՝ կատարել փետրվարի 20-ից:

Ջերմոցներում սկսել ցանքով մարտի 5-ից, ցանք-սից անմիջապէս հետո յուրաքանչուր յերկու որը մեկ անգամ ցնցուղով ջրել մինչև փխրացումը, այնուհետև կատարել 3-4 անգամ. փխրացնեմ և քաղճան մինչև մայիսի 15-ը:

Բանջարանոց տեղափոխել սածիլները՝ ժամկետ մայիսի 15-ին, նախորոք պատրաստելով մարդերը:

1. Կաղամքի համար թմբերի հեռավորությունը 1,5 մետր. յուրաքանչուր մարտի մեջ 4 շաբթ. բույսը բույսից՝ 50 սանտիմետր. Թմբերը կաղելուց հետո մարդերը հարթել ձեռքի փոցիոյի Պատրաստել ոչախներ. ոջախները պատրաստել մոխրով և ապա սածիլը կատարել Սածիլումը կատարել կամ վաղ առավոտյան, կամ յերեկոյան դեմ. Սածիլումից անմիջապես հետո ջրել:

Բանջարանոցը մինչև բերքահամարը պետք է լրել
8—10 անգամ, ամեն մեկ ջից հետո հողը քեշի գո-
լուց պետք ե վիխրացնել և քախսհանել,

ԱՅԴԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ՑԵՎ ԲԵՐՔԱՏՈՒ ԽԱՂՈՉԻ ԱՅԴՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԻ

- Այժմ*
1. Այդերացը կատարել վաղ գարնան, յերգ ձույնը հալվել և խիստ պարզեաների վտանգը անցել է, մարտի 15-ից մինչև ապրիլի 5-ը խնամքով և վորակով, հողը չթողնելով կռւտակված վաղերի տակ՝ ցըել թմբերի և շարքերի մեջ:
 2. Այգեստի աշխատանքները հանձնարել փորձված, ետի տեխնիկային լավ ծանոթ մարդկանց, ետի ժամանակ պետք և հեռացնել:
 - ա) թույլ մատերը, վորոնցից բերք չի սպասվում.
 - բ) հիվանդուու, վիրավոր, կարկտահարված և այլ պատահարներից մնասված մատերը:
 - գ) բնամատերը և այլ բոլոր մատերն ու շվերը, վորոնք խանգարում են վագերի կանոնավոր ձեւավորմանը, ետի աշխատանքները պետք ե սկսել անմիջապես այդերացից հետո, յերբ սկսվում ե հյութերի շարժումը՝ լացը, արգելի յերկար և անվորակ ետ կատարելը ու վագերը ծանրաբեռնելը ավելորդ մատերով և թերերով (տաշտակներով):
 3. Ետած այդու արքատի հավաքն ու տեղափոխումը կատարել ետին զուգընթաց ժամկետ մարտի 17-ից – 10-ը ապրիլ:

A 3971

4. Այգեփորը սկսել ետին զռւզընթաց, կատարել այդիների համատարած փոր 100 տոկոսով, ըստ վորի թմբերը փորել 20—25 սանտիմետր խորությամբ. իսկ միջնմբային տարածությունները (առուները) 18—20 սանտիմետր խորությամբ, վորպես կանոն—առաջ փորել միջնմբային տարածությունները և հետո թմբերը. Խուսափել միջնմբային տարածությունները 20 սանտիմետր ավել կատարելուց, վորով վնասում են վաղերի արմատների պիտանի մասերին ևստիվ արգելվում և այգեփորը կատարել բողբոջների փթթելու (ուռչելու) և ծաղկման ժամանակ, փորի հետ միասին կատարել մալախոտերի արմատների հավաք (չայիր, բիայն), դուրս հանել այգուց և ալրեւ Փորի ժամանակ ունենալ առանձին հատուկ անողներ։
5. Փորի ընթացքում բաց տնել վաղերի բները, մաքրել այն ավելորդ, վնասված, փթած մասերից և բների մեջ ընակված վնասատուներից, դուրս հանել այգուց և ալրեւ Փորի ժամանակ ունենալ առանձին հատուկ անողներ։
6. Փորձի ընթացքում անդախիսի միջոցով լրացնել այգու բաց մնացած տեղերը (քոռացած ոջախնեները), նախորոք ետի ընթացքում ալդ նպատակի համար առանձնացված մատերով։
7. Ալզիները բուժել բորդոյան հեղուկով 2 անգամ, առաջին բուժումը մինչև ծաղկելը՝ մայիսի 10-ից—մայիսի 25-ը, չերկրորդ բուժումը ծաղկաթափից հետո՝ հունիսի 16-ից—հունիսի 20-ը, յերրորդ բուժումը անցկացնել անհրաժեշտության դեպքում Ոիզիյում (սկ) յերեալու գեպքում, ծծումբով փո-

- շոտում հաւաարելու համար կլինի հասուկ հրա-
հանգ:
8. Այդիները խչմարել հիմնականում մեկ անգամ՝
հունիսի 20-ից մինչև հուլիսի 5-ը և լրացում կա-
տարել հուլիսի 25-ից մինչև ողոստոսի 20-ը:
 9. Հասուկ պայքար կաղմակերպել գալյուկի (դադի)
նկատմամբ, այդիների առուների յեղերքը միան-
գամայն ազատ պահել մոլախոտերից և գալյուկից,
թմբերի միջից վերացնել բոլոր տեսակի մոլախո-
տերի մնացորդները, վորոնք հանդիսանում են
գալյուկի տարածման ոջախներ, այդում գալյուկ
յերեալուն հետ արմիջապես մաքրել և այդուց
դուրս հանել ու վառել:
 10. Վազի վեգետացիոն (աճման) շրջանում կատարել
2 անգամ բջատում (սուզը տալ) հեռացնելով
հոռացած և ավելնորդ մատերը, մաքրել վազը չու-
րացած ճյուղերից և յեղունկներից (սուզը տա-
լու), աշխատանքները պետք և հանձնարարել ան-
պայման հմուտ փորձված այդեղործ մարդկանց
2-րդ անգամ (սուզը տալու) աշխատանքն պետք
և կատարել սեկատերով (ետի մկրատով): Առաջին
անգամ (սուզը տալ) մինչև ծաղկելը մայիսի 15
մայիսի 25, 2-րդ անգամ հունիսի 15-ից—հու-
լիսի 15-ը:
 11. Ամառը կատարել 3 անգամ փխրացում—քաղհան
հեռացնելով չայիրի, բիյանի արմատները ու մո-
լախոտերը մինչև նրանց ծաղկելը—ժամկետ՝
 1. 10—25-ը հունիսի (դադարեցնել ծաղկմ. շրջանում):
 2. 10—20-ը հուլիսի.
 3. 1—10-ը ողոստոսի.

- 12.** Ալգիները ջրել տարվա ընթացքում Յ—Յ անգամ:
 ա) ավարտել մինչև հունիսի 10-ը.
 բ) հունիսի 15-ից հուլիսի 10-ը.
 զ) հունիսի 10-ից ոգոստոսի 5-ը.
 դ) Խաղողաքաղից հետո թաղելու համար հոկտեմբերի 10-ից — նոյեմբերի 10-ը, խստիվ արգելվում է խաղողաքաղից 20 որ առաջ այդիները ջրել:
- 13.** Բոլոր այգիները անխտիր անցկացնել ապարորացիա, նշան անել (յարլեկ, պիտակ կպցնել) ասորափմնտի մեջ մանող զեֆիցիտ փոփոխակները. համապատասխան համարներով՝ հետագա դարձացումն ապահովելու համար:
- 14.** Անցկացնել մասայական սելեկցիա, ըստ վերում աարիներ շարունակ նկատված այն վաղերը, վորոնք ինպառ թերք չեն տալիս, կամ անվորակ և չառ քիչ են թերք տալիս, վոր չի արգարացնում իրան, նշան անել հետօգայում փոխարինելու այն նոր թերքատու վաղերով. այսպիս տնկումն անհրաժեշտ է թերքատվության բարձրացման համար.
- 15.** Արգելել ծերկապ անելը այգեթաղի փոխարեն, կատարել այգիների լրիվ թաղ 100 տոկոսով, զգուշությամբ առանց վաղին մնաս հասցնելու, վաղերի կոլուելու աշխատանքը հանձնաբարել հմուտ-փորձված մարդկանց ժամկետ հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը, Կտրականապես արգելվում է խաղողանոցներում անասուններ արգելվում և պահելը:
- 16.** Այգիների պարութացում. — բույսերն ել կենդանի եյակների, մարդկանցու անասունների նման պետք է ունենան մնունդ, աճելու, զարգանալու և թերք

տալու համար։ Այդ սնունդը, վազնել այլ բույսերի նման ստանում և հողից բայց այն տարբերությամբ, վոր խաղողի թուփը տառնյակ տարինում մնում և նույն հողի վրա և ուժասպառ և անում հողը, ուստի յեթե մենք ուզում ենք մեր այդիները ապահովել բարձր և կանոնավոր բերքով, ապա պետք և պահանջված ճնով ու քաշակությամբ պարաբռացնենք այդիները։ Մեզ մոտ ընդհանրապես նկատվում է մի տարի ավելի բերք, իսկ մյուս տարին՝ պակաս։ Ահա այդպիսի անկանոն և փոփոխակի բերքից խուսափելու համար և միշտ բարձր բերք ունենալու համար, պետք է վազին անհրաժեշտ քանակությամբ ու սիստեմատիկորեն պարաբռանյութ տանք և լրացնենք վազի սննդի այն պակասը, վորը սիստեմատիկ կերպով չի կարողանում լրացնել հողը։

Գոմաղը պետք է տալ 1 հեկտար այգուն տարփա համար, 50—60 տոնն (3000—3600 փութ), վորից կեսը պետք է տալ 1-ին տարում, մրուկ կեսը 3-րդ տարում։

Ծանօթություն։— Այն գեղքում, յերբ գոմաղի քանակությունը պակաս է, կարելի յե յուրաքանչյուր տարի մեկ հեկտարին տալ 13—15 տոնն գոմաղը, բայց ազգեցությունը նույն տարին չի արտահայտվի, այլ կարտահալտվի հետագա տարիներում։ Գոմաղը կարելի յե տեղափոխել ազիները թե աշնանը և թե վաղ գարնանը փորեւուց անմիջապես առաջ, յերբ ձյունը հալվել է, գոմաղը պետք և հավասար կույտերով լցնել թմբերի դոշին և փարփառ առաջ ցըել՝ փորելիս խառնել հողի հետ։

Մոխիրով պարաբռացնելու համար՝ 1 հեկտարին
պետք է տալ 1,5—2 ս ոնն։ Մոխիրը պետք է տե-
ղափոխել վաղ գարնանը և հավասարապես փառել
թմբերի դոշին և փորի ժամանակ խառնել հողի
հետ։

17. Խաղողի բերքահավաքը սկսել հոկտեմբերի՝ (1—5
սահմաններում և ավարտել հոկտեմբերի 25-ին։
Բերքահավաքին զուղընթաց (մինչև հոկտեմբերի
25-ը) հավաքել և թմբերից դուրս բերել խչմար-
նելը։
18. Գուրնան / գյուղատնտեսական աշխատանքների
համար այդիներում գործադրվելիք գյուղատնտե-
սական գործիքները և մեքենաները՝ հոտի մկրատ-
ները, սպոցները, լապատկաները, ետոցները, քե-
րեչները, վերմորելները (տորպիլները) վերանորո-
գել և նորերը ձեռք բերել ժամկետ՝ փետրվարի
5—20-ը։
19. Խաղողի բերքահավաքի համար անհրաժեշտ գյու-
ղատնտեսական գործիքները — տարաները ու մա-
ռաները գույլերը, կողովները, մկրատները, դանակ-
ները, տակառները (շագներ և սայլի չաները,
չաները, սայլերը և ֆուրդունները պատրաստեր,
վերանորոգել ու նորերը ձեռք բերել ժամկետ՝
սեպտեմբերի, 1-ից մինչև սեպտեմբերի 20-ը
20. Նորատունկ այդի տնկելու համար առանձնացնել
միջակ զարգացած մատեր, վորոնք նախորոք հա-
մարակալված են յեղել նախորդ տարում, այդպի-
սիներից ընտրություն կատարել, խուրձեր կապել
200-ական մատից, վրան ամբացնել փոփոխակի
անունը կամ ոլիտակը (յառլիկը) և թաղել խրա-
մատների մեջ — թեք ձեռվ, պապանելով այդ ձեռվ
մինչև հանձնելը։

ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ՏՆԿԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ա) Հողամասի ընթրուքյունը

Տնկարանի համար առանձնացվելիք հողամասերն ընտրելիս պետք է ընտրել՝

1. Հարթ հողեր, վորոնք զերծ լինեն ստորերկրությունից,
2. Հողի թեքությունը լինի դեպի հարավ կամ հարավ-արևմուտք:
3. Պաշտպանված լինի քամիների ազդեցությունից:
4. Ապահոված լինի ջրով:
5. Հնարավորություններ լինի առնկարանի հետագալայնացման համար:
6. Հոկելու և խնամելու լայն հնարավորություն անհնատ:

բ) Հնդավորների ցանկը (Շկոլիա-սեյանցեվ)

1. Հողամասը մաքրել քարերից:
2. Պարարտացնել գոմազրով կամ խառն աղբով, տալով հեկտարին 60—70 տոննա (120—140 ռալ), նայած հողի կազմությանն ու բերրիությանը:
3. Հողամասը վարել 18—20 սմ խորությամբ, հավաքել մոլախոտերի արմատները (չայիր և այլն), փոցխել զիգզագ փոցխով. ժամկետ 20/10—25/10-ի:
4. Պատրաստել մարգեր մեկ մետր լայնությամբ և

- 5—10 մետր յերկարությամբ յելնելով հողամասի
և ջրելու հարմարություններից:
5. Փոցխել մարգերը, լավ հարթիցնել, ակոսներ քա-
շել ըստ մարգերի լայնության 10—15 սմ հեռա-
վորության վրա, սերմերը ցանել ակոսների մեջ
2—3 սմ խորությամբ, ծածկել հողով և ջրել:
 6. Մեկ հեկտարում ցանել 50—60 կիլոգրամ խնձորէ
կամ տանձի սերմ 25/10 15/11-ի:
 7. Զըել ըստ պահանջի՝ 8—10 անգամ — 25/4—1/10-ի,
ըստ վորում առաջին ջուրը կատարել շնչուղով
(լեյլա) ցանելու ժամանակի
 8. Քաղհանը և փխրեցումը կատարել ջրելուց հետո,
յերբ հողը քեզի յե զալիս՝ 5—6 անգամ:
 9. Կատարել նոսրացում, յերբ նոր ծլած բույ-
սերն արդեն արձակել են 3—4 տերե. հանած սա-
ծիլների արմատների ծալրերի մի յերբորդ մասը
կտրել ծայրերից և տնկել շարքերի մեջ չըուսած
կամ բաց մնացած տեղերը:
 10. Վայրակները մարգերից հանել աշնան տերեաթա-
փից անմիջապես հետո 25/10—15/11-ի, տեսակա-
վորել ըստ վայրակների հաստության, չափելով
վայրակի արմատային վիզը: Առաջին տեսակը՝
5—7 միլիմետր, 2-րդ տեսակը՝ 5—6 միլիմետր և
3-րդ տեսակը՝ 3—5 միլիմետր:
 11. Մեկ հեկտարից սաւանալ 400000 հատ վայրակ, վո-
րից առաջին տեսակի՝ 30 տոկոս, 2-րդ տեսակի՝
45 տոկոս և 3-րդ տեսակի՝ 25 տոկոս:
 12. Վայրակների հանելուց և տեսակավորելուց հետո
պահել հողում թեք զրությամբ, ծածկելով տնկե-
ների յերկու յերբորդ մասը հողով:

զ) Տնկարանի տռաջին տօրվա աշխատանիները

1. Աշնանը մոնկարանի հողամասը մաքրել քարերից
և պարաբռտայնել գոմաղբով կամ խառն աղբով,
տալով մեկ ճեկտարին 40—50 տոնն (80—100
սալլ) նայած հողի կազմությանն ու բերրիությա-
նը՝ 15 10—20 10-ի:
2. Հողամասը վարել 25—30 սմ խորությամբ 20/10—
10, 11-ի:
3. Հողամասը դարնանը փոցիկել զիզդադ փոցխով
15, 3—15 4-ի:
4. Պլանիրովիկայի յինթարկել հողամասը ըստ հողա-
կտորների ու վանդակների և պատրաստել վոռո-
գ/չ ցանցը 10 4—15/4-ի:
5. Տնկիները նախապատրաստել տնկման համար.
ա) սածիլ արված տնկիների արմատները թար-
մացնել, վիրավորված արմատները հեռացնել և
առողջների ծայրերը կտրել.
բ) սածիլ չարված տնկիների արմատները կըտ-
րել, թողնելով 12—18 սմ, իսկ տնկիների ծայրե-
րը կտրել 18—22 սմ յերկարության վրա. կըտ-
րելուց անմիջապես հետո դնել ջրի մեջ և առա-
նոր հանել ու տնկել:
6. Վայրակները տնկել շարքերով, շարքը շարքից
90 սմ և անկին տնկուց՝ 35 սմ հեռավորության
վրա 15/4—25/4-ի:
7. Յուրաքանչյուր որվա տնկածը նույն որը ջրել.
8. Կատարել կուլտիվացիա և քաղհան 5—6 անդամ,
ջրելուց հետո, յերբ հողը քեշի յե զալիս. ժամ-
կետ 5, 5—1, 10-ի:

9. Կազմակերպել պայքար նկատվող հիվանդությունների և վնասատուների դեմ:
10. Նորմալ համարել յերբ տնկած վայրակների 97 տոկոսը կազում եւ:

դ) Կարիգությունների ցանքօր

1. Կորիգավորները ցանել անմիջապես տնկարանում աշնանը 20, 10—15, 11-ի, վորի հողը նախորդ պետք և վերամշակված լինի ամռան ընթացքում:
2. Կորիզները ցանել 90 մմ լայնություն ունեցող մարզերում, կորիզը կորիզից 5—10 մմ հեռավորության և 4—5 մմ խորության վրա: Հետագայում կատարել նոսրացում, թողնելով բույսը բույսից 35 մմ հեռավորության վրա: Ավելացած տընկանյութով լրացնել չըռուսած տեղերը: Այդ աշխատանքը կատարել յերբ բույսը 3—4 տերեանի յեղանակում, տնկելուց հետո անմիջապես ջրել ջրել ըստ պահանջի 8—12 անգամ, 1/4—19/9-ի:
3. Կատարել կուլտիվացիա և փխրեցում 5—6 անգամ, յերբ ջրելուց հետո հողը քեշի յեղալիս:

լի) Պատվտառում

1. Համարակալել բոլոր հողամասերն ու վանդակները.
2. Գրել, թե վորատեղ ի՞նչ սորտեր են պատվաստելու և ի՞նչ քանակով:
3. Մինչեւ պատվաստելը տնկիները մաքրել ավելորդ շիվերից 25, 7—15/8-ի:
4. Մինչեւ պատվաստելը, 2 որ առաջ, տնկիները լրել և պատվաստի տեղերը մաքրել թաց շորով:

5. Աչքապատվաստն սկսել ոգոստոսի 10-ից և ավարտել սկզբանի 10-ին:
6. Պատվաստի համար կտրել միամյա հասունացած շվերը՝
 - ա) առողջ, պատղարերող ծառերից, լրիվ զարգացած բողբոջներով և ոգտագործել միայն շվերին մասի ոչքերը.
 - բ) շվերի տերենները և բենիկները պետք են հեռացվեն անմիջապես կտրելուց հետո և թողնվեն շվեր վրա միայն բողբոջներն ու տերենակոթունները.
 - գ) շվերը պահել ջրի կամ խոնավ շորի մեջ.
 - դ) շվերը կտրել յերեկոյան կամ առավոտյան հովին:
7. Պատվաստը դնել արժատավզից 3—5 սմ բարձրության վրա, փշող քամիների կողմից:
8. 15 որից հետո ստուգել չկպածները և կատարել գերազատվաստում, իսկ կպածների կապերը թուլացնել յեթե նրանք անուր են:
9. Նորմալ և համարվում յերը աչքապատվաստի 95 տոկոսը հնդավորների և 75 տոկոսը կորիզավորների կպչում եւ:
10. Աշնան աչքապատվաստների բուգը լցնել հողով՝ 1/11—15, 11-ի:

զ) Տնկարտնի լեկուող տարվա խնամեր

1. Վաղ զարնանը հողը հետ տալ բուգ տված տեղից, իսպիրն արձակել, աչքը կպած տեղից 15—20 սմ բարձրության վրա կտրել վալրի մատը սուր դաշնակով:

2. Աչքապատվաստի դաշտում չկալած տնկիները վերապատվաստել աչքապատվաստի և կտրոնապատվաստի միջոցով:
3. Պատվաստացու մատերը կտրել ուշ աշնանը և ձմեռվա ընթացքում պահել խոնավ հողախառն ավազի կամ մաքուր ավազի մեջ թեք դրությամբ՝ նկուղներում, կամ այդպիսիները կտրել գարնանը նախքան ծառերի հյութաշարժի սկսվելը:
4. Կրկնապատվաստը կատարել ապրիլի 10—25-ը:
5. Պատվաստը կապել յեղունկին (շիպին) նրա 7—8 սանտիմետր գառնալուն պես և մաքրել ավելորդ վայրի շվերն ու բողբոջները, թողնելով բացի պատվաստից նաև մեկ վայրի շիվ ծայրում, յեղունկը կանաչ դրության մեջ պահելու համար: Ամառվա ընթացքում պատվաստը կապել 2—3 անդամ, մաքրել վայրի շվերից 3—4 անդամ: Մատապատվաստները կապել ցցերին (հենարաններին), ծայրում թողած շիվի ծայրը կտրել պարբերաբար:
6. Ամառվա ընթացքում կատարել 2—3 անդամ ոլինցիրովկա (այն ե՛ կտրել մեկ տարեկան տնկիների ճյուղերը 5—6 ոմ յերկարության վրա):
7. Զբել ըստ պահանջի, վոչ պակաս 8—10 անդամ, ըստ վորում վերջի ջուրն ավարտել սհպտեմբերին:
8. Կատարել կուլտիվացիա և քաղնան 6—8 անդամ, յերբ ջրելուց հետո հողը քեշի յե գալիս:
9. Հեռացնել պատվաստի յեղունկիները բոլոր տնկարաններում 15/6—30/6-ի:

Ե) Տնկարանի յերրող տարվա խնտմքը

1. Մեկ տարեկան պատվաստած տնկիները ձեռվորել լիդերային սխտեմով գյուղատնտեսի ցուցմունքով ու ղեկավարությամբ:
 2. Զեավորումը պետք է լինի ստանդարտ ձեռվոր բարձրությունը 45—80 սմ, վորից հետո թողնվում է սաղաթ, ըստ վորում բնի բարձրությունը պետք է լինի՝

Դեղձենիների	համար	45—50	սմ
Ծիրանենիների	>	75—80	սմ
Սալորների	>	55—60	սմ
Բալերի	>	55—60	սմ
Կեռասների	>	75—80	սմ
Խնձորների	>	75—80	սմ
Տանձենիների	>	65—70	սմ:

Այդ չափին չհառած կամ թույլ աճած տնկիները չեն ձևավորվում, այլ 5-7 մմ բարձրության վրա ընտրել ամենառուժեղ բողբոջը և թողնելով յեղունկ, ծալրերը կտրել:

3. Սաղարթ կազմելու համար ընտրել 45 աստիճանի
անկյուն ունեցող առողջ բողբոջներ, 20—35 սմ
միմյանցից հեռավորության վրա, հակառակ ուղ-
ղությամբ, թողնելով հիմնական ճյուղերի համար
2—3 բողբոջ բացի լիդերից (ծալքի ճյուղը). Նա-
յած տնկենու ուժեղությանը, ապա թողնել լեզունկ
լիդերը կապելու համար, Բողբոջների հեռավորու-
թյունը պետք է լինի՝

ա) ծիրանի, խնձորի, տարնձենու և կեռասի համար 30-35 մ.

բ) դեղձերի, բալերի, սալորենիների

համար 20—25 մմ:

4. Հատուկ խնամք տանել սաղարթի զարդացման վրա,
յեղած բոլոր ավելորդ շվերը կտրելով 4—5 սմ
լերկարության վրա, կտրել նաև սաղարթի միջի
ավելորդ շվերը (վորոնք աճել են ընտրված հիմ-
նական ճյուղերի արտնքում), վորով հնարավորու-
թյուն կտրվի հիմնական ճյուղերին լավ զարգա-
նալու:
5. Ջրել վոչ պակաս 5—7 անգամ. վերջի ջուրն ա-
վարել հոկտեմբերի վերջերին:
6. Կատարել կուլտիվացիա և քաղհան 4—5 անգամ,
ջրելուց հետո, յերբ հողը քեզի յե գալիս:
7. Կաղմակերպել պայքար յերեացող հիվանդություն-
ների և վնասատուների դեմ:
8. Մաքրել բնել և հեռացնել սաղարթի յեղունկնե-
րը՝ 15/8—25/8-ի:
9. Տնկիները հանել աշնանը տերեաթափից հետո—
25/10—15/11-ի:
- Իսկ յեթե տնկիների տերեաթափը ուշանում է,
այդ դեպքում անկիները չպետք է հանել (տնկի-
ները հասունացած չեն), պետք է թողնել և գար-
նանը հանել տնկման համար, նախքան հյութա-
շարժության սկսվելը 15/3—14/4-ի:
10. Տնկիները բաց թողնել՝
ա) գարնան համար՝ 15/3—14/4 ի.
բ) աշնան 25/10—10/11-ի, իսկ հնացած
հանված տնկիները թաղել հողում թեք դրու-
թյամբ և պահել մինչև զարունը:
11. Տնկելու համար բաց թողնել առողջ, ուղիղ բուժ
ունեցող տնկիները, վորոնց սաղարթը լինի 3 հիմ-
նական ճյուղից վոչ պակաս (հաշված նրա լիգերը

նս), արմատաւին սիստեմը լինի փարթամ աճուծ
և հիվանդություններից զերծ մնացած:

12. Մեկ հեկտարից ստանալ՝

ա) կորիզավոր մեկ տարեկան	18.000	հատ
բ) հնդավոր » » 3.000 »		
գ) » յերկու » 20.000 »		

բ) Պտղատու հին այզիների խնամքը

1. Այզիները ետել և չըրուկները հեռացնել՝

ա) հնդավորներին $5/4 - 20.4$ -ի.

բ) կորիզավորներին՝ $5/4 - 15.4$ -ի:

Առաջացած վերքերին մածուցիկ քսել:

2. Ծառերի բուժումը կատարել՝

ա) 1-ին բուժումը՝ բորդոյան հեղուկի մեկ տոկոսային լուծույթով, խառնելով յուրաքանչյուր դույլին 8 գրամ փարիզյան կանաչ՝ $5.4 - 20.4$ -ի:

բ) 2-րդ բուժումը՝ բորդոյան հեղուկի 0,75 տոկոսային լուծույթով, խառնելով յուրաքանչյուր դույլին 10 գրամ փարիզյան կանաչ՝ $5.5 - 20.5$ ի:

գ) 3-րդ բուժումը՝ բորդոյան հեղուկի մեկ տոկոսային լուծույթով խառնելով լուրաքանչյուր դույլին 12 գրամ փարիզյան կանաչ՝ $25/5 - 10/6$ -ի:

դ) Պայքար լվիճի դեմ՝ $12.5 - 20.5$ -ի:

յի) 5-րդ բուժումը՝ յերկաթ-արջասպի 5 տոկոսային լուծույթով, տերեւաթափից անմիջապես հետո՝ $5/11 - 20.11$ -ի:

Այս բուժումը աշնանը չկատարելու դեպքում կատարել վաղ գարնանը՝ $1/3 - 10/3$ -ի:

3. Աշնանային ծառաբուժումից առաջ ծառերի բները մաքրել փտած կեղևներից և այլ մնացորդներից, խնամքով հավաքել և այրել այդպիս/ները, նույնպես հավաքել և ալրել ծառերի տակը թափված տերևներն ու այլ որպանական մնացորդները;
4. Աշնան և վաղ զարնանը կատարել ծառերի բների շուրջը փորելու աշխատանքները;
5. Ազդիները ջրել 5—6 անգամ և պարբերաբար կատարել փորեցում ծառերի շուրջը;
6. Ամառվա ընթացքում պտղով ծանրաբեռնված ծառերին նեցուկ տալ;
7. Չորացած ծառերի տեղը լրացնել նոր ծառերով, միաժամանակ կատարել պատվաստում և ծերացած ծառերի յերիտասարդացում;
8. Ազդոնումների դեկավարությամբ ու ցուցմունքներով կատարել նորատունկ ծառերի ձևավորումը:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038809

[3054] 226

A $\frac{1}{3971}$

Проп.